ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.06.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/59

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.05.2019թ. թիվ 26/26-1/8653-2019 գրությամբ «Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգային կենտրոն» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 20.05.2019թ. թիվ 08/15.3/6491-19 գրության հիման վրա, 24.05.2019թ. թիվ 26/26-1/8653-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգային կենտրոն» ՓԲԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

«Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգային կենտրոն» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/59 ընթացակարգի շրջանակներում 31.05.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.05.2019թ. թիվ 08/15.3/6491-19 գրությամբ հայտնել է, որ ՀՀ տրանպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Սեյսմակայուն Շինարարության Զարգացման Ազգային Կենտրոն» ՓԲԸ-ի միջև 28.02.2019թ. կնքվել են «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/2Ն» և «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/4Ն» ծածկագրերով պետական գնման պայմանագրեր:

Ընկերությունը պայմանագրերով սահմանված ժամկետներում չի կատարել իր պարտավորությունները, ինչի արդյունքում Պատվիրատուն, հիմք ընդունելով կնքված պայմանագրերի 2.1.3 կետի դրույթները, միակողմանի լուծել է վերոհիշյալ պայմանագրերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/59 ընթացակարգի շրջանակներում 31.05.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/59 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/59 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Սեյսմակայուն Շինարարության Զարգացման Ազգային Կենտրոն» ՓԲԸ-ի միջև 28.02.2019թ. կնքվել են «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/2Ն» և «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/4Ն» ծածկագրերով պայմանագրերը (հետայսու նաև՝ Պայմանագրեր), որոնց համաձայն Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրերով սահմանված կարգով և ժամկետներում իրականացնել նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքներ:

2. «Սեյսմակայուն Շինարարության Զարգացման Ազգային Կենտրոն» ՓԲԸ-ին ուղղված 06.05.2019թ. թիվ 08/15.3/5907-19 գրությամբ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրերի 2.1.3 կետի պահանջը, 06.05.2019թ. միակողմանի լուծում է Պայմանագրերը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.05.2019թ. թիվ 26/26-1/8653-2019 գրությունը, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 20.05.2019թ. թիվ 08/15.3/6491-19 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի

գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Սեյսմակայուն Շինարարության Զարգացման Ազգային Կենտրոն» ՓԲԸ-ի միջև 28.02.2019թ. կնքվել են «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/2Ն» և «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/4Ն» ծածկագրերով պայմանագրեր, որոնց համաձայն Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրերով սահմանված կարգով և ժամկետներում իրականացնել նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքներ:

Մասնավորապես՝ «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/2Ն» ծածկագրով պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարարում է, իսկ Ընկերությունը ստանձնում է Ա/ճ Հ-30 Մ-4 – Ճամբարակ – Դրախտիկ կմ 35+050-ում գտվող կամրջի հիմնանորոգման, Մ-14, Ծովագյուղ – Շորժա - Վարդենիս ավտոճանապարհի կմ22+700-ում վթարված կամրջի հիմնանորոգման (Ճամբարակի տարածաշրջան) և Մ-14, Ծովագյուղ – Շորժա - Վարդենիս ավտոճանապարհի կմ45+500-ում վթարված կամրջի հիմնանորոգման (Ճամբարակի տարածաշրջան) նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների կատարման պարտավորությունը (հետայսու նաև՝ աշխատանք)՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Նույն պայմանագրի N 1 հավելվածով աշխատանքների կատարման ժամկետը սահմանվել է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 25 (քսանհինգ) օր:

«ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/4Ն» ծածկագրով պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարարում է, իսկ Ընկերությունը ստանձնում է Մ-1, Երևան – Աշտարակ – Գյումրի - Վրաստանի սահման, կմ148+300 - կմ152+400 առանձին հատվածների անցանելիության ապահովման (Աշոցքի տարածաշրջան, դեպի Բավրայի անցակետ տանող հատված), Մ- 4, Երևան - Սևան - Իջևան - Ադրբեջանի սահման, կմ67+500 փլուզված հատվածի վերականգնման (գաբիոնային շարվածք) (Սևանի տարածաշրջան), Մ- 4, Երևան - Սևան - Իջևան - Ադրբեջանի սահման, կմ88+500 փլուզված հատվածում ե/բ հենապատի կառուցման (Դիլիջանի ոլորաններ), Մ-16, Մ-4 – Ոսկեպար – Նոյեմբերյան - Մ-6, կմ33-ում վթարված խողովակի վերականգնման (Նոյեմբերյանի տարածաշրջան, Բաղանիս - Ջուջևան հատված), Հ-21, Հոռոմ – Արթիկ -

Ալագյազ ավտոճանապարհի Հառիճ համայնքում վթարված խողովակի վերականգնման և Հ-30, Մ4-Ճամբարակ – Դրախտիկ - Մ14 հարկադիր քարաթափման աշխատանքների (Զորավանք-Մարտունի համայնքների տարածք) նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների կատարման պարտավորությունը՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Նույն պայմանագրի N 1 հավելվածով աշխատանքների կատարման ժամկետը սահմանվել է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 20 (քսան) օր:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Սեյսմակայուն Շինարարության Զարգացման Ազգային Կենտրոն» ՓԲԸ-ի միջև 28.03.2019թ. կնքվել են «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/2Ն» և «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/4Ն» ծածկագրերով պայմանագրերի թիվ 1 համաձայնագրերը, որոնցով հաստատվել են Պայմանագրերի վճարման ժամանակացույցները:

Համաձայնագրերն ուժի մեջ են մտել կողմերի ստորագրման պահից:

Ընկերությանն ուղղված 22.04.2019թ. թիվ 08/14.1/5132-19 գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ կողմերի միջև 28.02.2019թ. կնքված «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/4Ն» ծածկագրով պայմանագրի համաձայն՝ Ընկերության կողմից մինչև 17.04.2019թ., ինչպես նաև «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/2Ն» ծածկագրով պայմանագրի համաձայն՝ մինչև 22.04.2019թ. պետք է իրականացվեին Պայմանագրերով նախատեսված համապատասխան աշխատանքները:

Նույն գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ անհրաժեշտ է սեղմ ժամկետներում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը ներկայացնել հիմնավորում՝ նշված նախագծային աշխատանքները չիրականացնելու վերաբերյալ:

Ի լրումն վերոհիշյալ գրության՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը 29.04.2019թ. թիվ 08/14.1/5427-19 գրությամբ հայտնել է, որ Պայմանագրերով նախատեսված նախագծերը մինչև 02.05.2019թ.

Պատվիրատուին չներկայացնելու դեպքում, վերջինիս կողմից կկիրառվեն Պայմանագրերի 2.1.3 կետով նախատեսված գործառույթները:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանն ուղղված 30.04.2019թ. թիվ 01.05-19/178 գրությամբ «Սեյսմակայուն Շինարարության Զարգացման Ազգային Կենտրոն» ՓԲԸ-ն հայտնել է, որ Պատվիրատուի և «ՍՇԶԱԿ» ՓԲԸ-ի միջև կնքված «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/2Ն» և «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Ն» ծածկագրերով պայմանագրերով Ընկերության կողմից ստանձնած աշխատանքների կատարումը գտնվում է ընթացքի մեջ, սակայն ելնելով առաջացած տեխնիկական և նախագծային լուծումներից երկարաձգվում է աշխատանքների կատարման ժամկետները, որի արդյունքում Ընկերության կողմից խախտվել են վերոհիշյալ աշխատանքների կատարման ժամկետները:

Նույն գրությամբ Ընկերությունը հայտնել է, որ պարտավորվում է վերոհիշյալ նախագծային փաստաթղթերը ներկայացնել 13.05.2018 թվականին:

«Սեյսմակայուն Շինարարության Զարգացման Ազգային Կենտրոն» ՓԲԸ-ին ուղղված 06.05.2019թ. թիվ 08/15.3/5907-19 գրությամբ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը հայտնել է, որ Ընկերության կողմից մինչև 17.04.2019թ. և 22.04.2019թ. չեն իրականացվել համապատասխանաբար «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/4Ն» և «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/2Ն» ծածկագրերով պայմանագրերով նախատեսված աշխատանքները, ուստի Պատվիրատուն հիմք ընդունելով Պայմանագրերի 2.1.3 կետի պահանջը, 06.05.2019 թվականից միակողմանի լուծում է Պայմանագրերը:

Այսպիսով՝ Պայմանագրերի 1-ին կետի 1.1 ենթակետով սահմանվել է, որ աշխատանքը կատարվում է Պայմանագրերի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրերի N 1 հավելված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ աշխատանքներն ենթակա են կատարման ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/4Ն» ծածկագրով պայմանագրի դեպքում 20

(քսան) օր, իսկ «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/2Ն» ծածկագրով պայմանագրի դեպքում՝ 25 (քսանհինգ) օր:

Կողմերի միջև համապատասխան համաձայնագրերը կնքվել են 28.03.2019թ.:

Պայմանագրերի 2-րդ կետի 2.1.3-րդ ենթակետի «բ» պարբերությամբ սահմանվել է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ***խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Սեյսմակայուն Շինարարության Զարգացման Ազգային Կենտրոն» ՓԲԸ-ն թույլ է տվել վերջինիս և ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության միջև 28.02.2019թ. կնքված «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/4Ն» և «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/2Ն» ծածկագրերով պայմանագրերով նախատեսված պարտավորության խախտում, այն է՝ Պայմանագրերով սահմանված ժամկետում չի իրականացրել Պայմանագրերով նախատեսված աշխատանքները, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրերի միակողմանի լուծմանը:

Գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցերի ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.05.2019թ. թիվ 26/26-1/8653-2019 գրությամբ «Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգային կենտրոն» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգային կենտրոն» ՓԲԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**